

82ԴԴ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏՏԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ
Մայիս 1-2, 2009

Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցի
Լոս Անճելըս, Գալիֆորնիա

Ա. ՆԻՍ

Թեմական Պապգամաւորական 82րդ Ժողովի պապգամաւորներուն արձանագրութիւնը սկսաւ Ուրբաթ, Մայիս 1ի առաւօրեան ժամը 9:00ին: Իսկ ժամը 10:10ին Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի Բացման Աղօթքէն ետք, ներկաները միաբերան երգեցին «Սուրբ Աստուած»: Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահպապեան հայերէնով եւ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քհնյ. Տէմիրճեան անգլերէնով Աւետարանական ընթերցում կատարեցին: Ապա Հոգեհանգիստ կատարուեցաւ այս փարուան Յունուարին վախճանած Արժ. Տ. Մեսրոպ Աւագ Քհնյ. Սարաֆեանի եւ Փետրուար ամսուան մէջ Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցիէն մահացած ճան Եալտրվեանի հոգիներուն համար:

Ժողովին Դիւանը Սրբապան Հօր Նախագահութեամբ կը բաղկանար հետեւեալներէ.–

Իրաւաբանուհի Էտրիըն Գրիգորեան՝ Արեւնապետ, Էտ Նիգարեան՝ Փոխ Արեւնապետ, Զարուհի Տէր Մկրտիչեան՝ Արեւնադպրուհի Անգլերէնի եւ Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Միսեան՝ Արեւնադպիր Հայերէնի:

Արեւնապետուհի Էտրիըն Գրիգորեան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ գնահատեց նաեւ Պապգամաւորական Ժողովի Հիւրընկալ Յանձնախումբին կատարած սքանչելի աշխատանքը:

Օրակարգի որդեգրումէն եւ յանձնախումբերու նշանակումէն ետք, Պապգամաւորները վաւերացուցին նախորդ փարուան՝ 81րդ Թեմական Պապգամաւորական Ժողովին Արեւնագրութիւնը:

Սրբապան Հայրը ուրախութեամբ յայտարարեց, որ ընդառաջելով իր հրաւերին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը այս օրերուն տեղի ունեցած Թեմիս համագումարներուն մասնակցելու համար ղրկած էր Հոգշ. Տ. Պարթեւ Աբեղայ Բարսեղեանը եւ Արժ. Տ. Արամ Քհնյ. Միրզոյեանը: Սրբապան Հօր հրաւերով Հայր Պարթեւ կարդաց Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին պապգամը: Նորին Սրբութիւնը իր պապգամին մէջ կ'ըսէր. «Մեր ժողովրդի հաւատքի, բարի ու եկեղեցաշէն իրագործումների պատմութիւն է կերտուել նաեւ Ամերիկայի օրհնեալ հողի վրայ, ուր 19-րդ դարի երկրորդ կէսից սկսեալ հաստատուեցին եղեռնից մազապուրծ ու Հայրենիքից փարագրուած հայորդիները: Բարձրեալի օրհնութեան ներքոյ աւելի քան մէկ դար Ամերիկայի Միացեալ Նահանգաց Հայոց Արեւմտեան Տիրախնամ Թեմը փառքով իրականացրել ու իրականացնում է իր առաքելութիւնը՝ յանուն քրիստոնէական ճանաչողութեան, հաւատքի պօրացման եւ ազգային կեանքի պայծառութեան:

Մեր գնահատութիւնն ենք բերում Թեմակալ Բարեջան Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին եւ հոգեւոր դասին՝ մաղթելով նորանոր յաջողութիւններ Տիրոջ, ազգի ու եկեղեցու առջեւ պատասխանատու առաքելութեան մէջ: Հայրապետական Մեր սէրն ու գնահատանքն ենք յղում նաեւ Թեմական ու Ծխական Խորհուրդների, Ազգային, Կրթական, Մշակութային ու Բարեսիրական հաստատութիւնների, Տիկնանց ու Երիտասարդական միութիւնների պատուարժան անդամներին ու հաւատաւոր բոլոր հայորեաց, ովքեր աջակից են հոգեւոր դասին՝ Արեւմտեան Թեմում մեր Եկեղեցու թեմական ու ծխական կառույցների պօրացման, համայնքների ու եկեղեցիների պայծառութեան աստուածահաճոյ գործում: Թող Բարձրեալ Տէրը շնորհապարդի ձեզ ամենքիդ եւ աջակից լինի ձեզ ձեր բարի ծառայութեան մէջ»:

Նորին Սրբութեան պապգամին Անգլերէն թարգմանութիւնը կարդաց Արժ. Տ. Սուշեղ Աւագ Քհնյ. Թաշճեան:

Օրուան Հոգեւոր Պապգամը փուլաւ Արժ. Տ. Սիքայէլ Քհնյ. Կիւրեղեան:

Ապա Պարզամաւորները հանգամանօրէն նկարի առին հետեւեալ տեղեկագիրները, որոնք արդէն իսկ տպուած էին ժողովի գրքոյկին մէջ.-

Թեմական Խորհուրդ, Առաջնորդարանի Վարիչ Տնօրէն, Հոգեւորականաց Վարչական Խորհուրդ, Առաջնորդանիստ Մայր Տաճարի Շինութեան Յանձնախումբ, Առաջնորդանիստ Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբ, Տնտեսութեան Յանձնախումբ, Հոգեւորականաց Թոշակ եւ Հանգստեան Ծրագրի Յանձնախումբ, Կրօնական Դաստիարակութեան Բաժանմունք, Քրիստոնէական Դաստիարակութեան Խորհուրդ, Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդ, Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Սարմին, Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչապուրեան Դպրաց Դաս Երգչախումբ, «Հայ Սիերա» Ճամբար, Ճամբարի Խնամակալ Սարմին, Ամառնային Ճամբարի Յանձնախումբ, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կապակերպութիւն՝ Կեդրոնական Խորհուրդ, Հայ Քրիստոնէայ Երիտասարդաց Առաքելութիւն Դէպի Հայաստան (CYMA), Խնամակալութեան Ծրագիր, Հայց. Եկեղեցւոյ Դպրաց Դասերու Միութիւն, Արեւմտեան Թեմի Մնայուն Հիմնադրամ, Պեղական Յարաբերութիւններ եւ Փոխ-Յարաբերութեան Յանձնախումբ (Protocol), Միջ-Եկեղեցական Յարաբերութիւններ, Սուրբ Ներսէս Ընծայարան, Առաջնորդարանի Գրախանութ, Առաքել եւ Շաքէ Աղա-Սարգիսեան Գրադարան, Հայ Արհեստավարժներու Միութիւն, «Մայր Եկեղեցի» Պաշտօնաթերթ, Առաջնորդարանի Պարկերայարդ Պարի Օրացոյց, Հրատարակութիւններ, Էջմիածնի Փոքրիկներու Հիմնադրամ, «Մեր Յոյս» Ծրագիր: Սուրբ Ծննդեան Ճաշկերոյթ-Պարահանդէսի Յանձնախումբ, Ամառնային Ուխտագնացութիւն, Գէորգեան Ճեմարան, Հաշուեքննիչ Յանձնախումբ, Առաջնորդարանի Նիւթական (պիւրճէի) Տեղեկագիր:

Առաջնորդ Սրապան Հօր հայերէնով եւ անգլերէնով տպուած Տարեկան Տեղեկագիրը որ բաժնուեցաւ պարզամաւորներուն, երախտագիտութեամբ եւ խոր պագումներով ընդունուեցաւ:

Հոգ2. Տ. Պարթեւ Աբեղայ Բարսեղեան եւ Արժ. Տ. Արամ Քհնյ. Սիրպոյեան կարճ պարզամներ տուին եւ խօսեցան նաեւ անցնող մի քանի օրերու ընթացքին իրենց ունեցած հիանալի տպաւորութիւններուն մասին: Յարուկ շնորհակալութիւն յայտնեցին Առաջնորդ Սրբապան Հօր, որ վիրենք հրաւիրած էր եւ խորին երախտագիտութիւն յայտնեցին Ամենայն Հայոց Կեհափառ Հայրապետին, որ վիրենք արժանի գրած էր այս մեծ պատուին:

Ընտրողական Յանձնախումբին Տեղեկագիրը ներկայացուց Թեմական Խորհուրդի Անդամ Բր2. Ռատր Սրկ. Ճորճորեան: Տեղւոյն վրայ աւելցան նաեւ նոր թեկնածուներու անուններ:

Առաջնորդանիստ Մայր Տաճարի Կառուցման Յանձնախումբի Արեւնապետ՝ Պրն. Արմէն Համբար յաւելեալ տեղեկութիւններ տուաւ Մայր Տաճարի կառուցման աշխատանքներու մասին: Իսկ Պրն. Անդրանիկ Զօրայեան՝ Արեւնապետը Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբի, նոյնպէս յաւելեալ տեղեկութիւններ տուաւ: Կառուցման Յանձնախումբի անդամ Պապ Սիմոնեան եւս լուսաբանիչ տեղեկութիւններ հաղորդեց:

Սրբապան Հայրը գնահատեց բոլոր յանձնախումբերուն կատարած նուիրեալ ծառայութիւնները: Կէսօրուան ժամը 12:15ին ժողովը դադար առաւ:

Բ. ՆԻՍ

Սրբապան Հօր Նախագահութեամբ Երկրորդ Նիստը գումարուեցաւ կէսօրէ ետք ժամը 1:30ին: Բացման աղօթքէն ետք 82րդ Թեմական Պարզամաւորական Ժողովի Պարաստութեան Յանձնախումբի անունով Տիկին Լիլի Պալեան բարի գալուստ մաղթեց պարզամաւոր-

ներուն, ապա ուրախութեամբ յայտնեց, թէ ժողովը գեղեցիկ առիթ մը եղած էր եկեղեցւոյ համալիրէն ներս կարգ մը նորոգութիւններ ընելու: Ի սրտէ յաջողութիւն մաղթեց ժողովին:

Թեմական Խորհուրդի Գանձապահ՝ Տիար Ճորճ Ուկունեան մանրամասն տեղեկութիւններ տուաւ Առաջնորդարանի հաշիւներու մասին եւ շնորհակալութիւն յայտնեց նախորդ տարուան Գանձապահ՝ Տիար Պէն Գրիգորեանին, որ չափազանց օգտակար դարձած էր իրեն: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ Առաջնորդարանի Հաշուապահ՝ Տիկին Սիլվա Գայայեան-Քենտրիճեանին, որ կանոնաւոր կերպով կատարած էր հաշուապահութիւնը՝ դիւրացնելով իր գործը:

Թեմական Խորհուրդի Արեւնապետ՝ Իրաւաբան Ժուլէֆ Կանիմեան իր ողջոյնի խօսքը ուղղեց պարգամաւորներուն եւ շեշտեց, թէ հաւաքքով, քրիստոնէական սիրով եւ համերաշխութեամբ Արեւմտեան Թեմը հաստատակամութեամբ պիտի շարունակէր իր հոգեւոր առաքելութիւնը՝ ընդ հովանեաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Նկատի ունենալով, որ այս ժողովի ընթացքին քուէարակութիւն տեղի պիտի ունենար Սրբազան Հօր որպէս Առաջնորդ պաշտօնավարութեան եօթնամեայ երկրորդ շրջանին համար, որ պիտի սկսէր 2010 թուի Մայիսէն, կոչ ուղղեց պարգամաւորներուն, որ նկատի ունենալով Սրբազան Հօր նուիրումը եւ անցող վեց տարիներու ընթացքին կատարած հսկայական նուաճումներն ու իրագործումները, դրական արտայայտուէին իրենց քուէաթուղթին մէջ: Շնորհակալութիւն յայտնեց Թեմական Խորհուրդէն իրենց շրջանը աւարտող Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Սարգսեանին, Դոկտ. Վահրամ Պիրիճիքին եւ Բրշ. Գարլը Սրկ. Պարտազեանին, Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին, ժողովի Պատրաստութեան Յանձնախումբին եւ բոլոր անոնց, որոնք զանազան պարտականութիւններով օգտակար հանդիսացած էին: Ներկայացուեցան նաեւ ա՛յլ կարեւոր տեղեկագիրներ:

Սրբազան Հօր պաշտօնավարութեան շրջանին համար քուէարակութենէն առաջ, Թեմիս Հոգեւորականաց Համագումարի անունով Արժ. Տ. Արշակ Աւագ Քհնյ. Խաչատուրեան կարդաց պարտաւորած բանաձեւը, որ Սրբազան Հօր անձուէր ծառայութիւնները նկատի ունենալով, կոչ կ'ուղղէր պարգամաւորներուն դրական որոշում տալու:

Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հօր եօթնամեայ նոր պաշտօնավարութեան շրջանին մասին Թեմիս Կանոնադրութեան Գ. Գլուխի (Առաջնորդ) Հատուած 93(բ) կը կարդացուի այսպէս. – «*Իր ընթացիկ շրջանի պաշտօնավարութեան վեցերորդ (6) տարուան աւարտին, Թեմական Պարգամաւորական Ժողովը իր տարեկան Ժողովին՝ ներկայ եղող ու քուէարկող պարգամաւորներուն երկու երրորդին (2/3) քուէներով կ'որոշէ պահել Աթոռակալը եօթը (7) տարուան շրջանի մը համար, եւ կամ նոր ընտրութիւն կատարել*»:

Տեղի ունեցաւ գաղտնի քուէարկութիւնը: Ուրախ ենք յայտնելու, թէ 82րդ Թեմական Պարգամաւորական Ժողովին ներկայ գտնուող եւ քուէարկող 109 պարգամաւորներէն 88 պարգամաւորներ որոշեցին աթոռակալ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրպէրեանը պահել 7 տարուան նոր շրջանի մը համար, որ պիտի սկսի յառաջիկայ տարուան Մայիսէն:

Ցնծութեամբ կը յայտնենք, թէ Թեմիս Կանոնադրութեան համաձայն, Պարգամաւորական Ժողովի Դիւանի պաշտօնեաներու ստորագրութեամբ՝ առնուած որոշումը նամակով պաշտօնապէս հաղորդուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Այս ուրախ լուրը յայտարարուելէն ետք, հոգեւորականներ եւ սարկաւազներ մեծ թափօրով Առաջնորդ Սրբազան Հայրը Եկեղեցի առաջնորդեցին «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ: Սրբազան Հայրը տուաւ հոգեւոր պարգամը եւ յառաջիկայ տարիներուն իր գործունէութեանց հիմնական կէտերը:

2003–2009 Ժամանակահատվածին կարելի է իրագործումներ.

1.- Քահանայից թեկնածուներ: Ընդհանուր թիվ 14, որոնցմէ 4 ձեռնադրուած ամուսնացեալ քահանայ:

2.- Թեմէն ներս աշխատանքի հրաւիրուած նոր եկեղեցականներու խումբ մը:

3.- Նոր համայնքներու կազմութիւն եւ հոգեւոր հովիւներու նշանակումներ:

- .- Ventura County – Յովէլ Քինյ. Օհանեան
- .- Santa Barbara – Յովէլ Քինյ. Օհանեան
- .- Boise – Աւերիս Քինյ. Արովեան
- .- Portland – Ջարեհ Քինյ. Մանսուրեան
- .- Denver – Ջաւէն Քինյ. Մարկոսեան
- .- New Mexico – Ջաւէն Քինյ. Մարկոսեան
- .- Burbank – Խաժակ Քինյ. Շահպապեան
- .- La Crescenta – Յովսէփ Ա. Քինյ. Յակոբեան
- .- Santa Clarita – Ներսէս Քինյ. Հայրապետեան
- .- Palmdale – Ներսէս Քինյ. Հայրապետեան
- .- Carson City – Աւերիս Քինյ. Արովեան
- .- Las Vegas – Սերոբ Քինյ. Ապարեան
- .- La Verne – Տիրան Քինյ. Աւագեան

Այլ նշանակումներ.-

- .- Youth Department – Աւերիս Քինյ. Արովեան
- .- Cathedral Supervisor – Պարետ Ծ. Վրդ. Երէցեան
- .- Ararat Home – Դաւիթ Քինյ. Զէլվէեան
- .- Religious Education Department – Մաշտոց Զօպանեան
- .- Sunday and Saturday Schools – Տաճար Ծ. Վրդ. Եարպըմեան

4.- Հրատարակութիւններ: Անցնող վեց տարիներու ընթացքին Արեւմտեան Թեմէն ներս լոյս տեսան աւելի քան 130 տարբեր կրօնական հրատարակութիւններ:

5.- Կալուածներ: Այստեղ տեղին է նաեւ յիշել, որ անցնող վեց տարիներու ընթացքին Առաջնորդարանը օժտուեցաւ նոր կալուածներով, որոնք պիտի օգտագործուին, եւ ոմանք արդէն ընթացքի մէջ են գործածուելու եկեղեցաշինութեան համար: Այդ կալուածներն են.– San Diego–ի, Orange County–ի, Arizona–ի, Portland–ի, Santa Clarita–ի, Las Vegas–ի եւ La Crescenta–ի շրջաններուն մէջ:

6.- Բաւարար չէ ու պիտի չըլլայ միայն կալուածներ ունենալ, եթէ երբէք ըստ յարմար–ւոյն այդ կալուածներուն վրայ պիտի չկառուցուին հայկական ոճի երկնասլացք գմէթով Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին: Առ այդ, այդ աշխատանքներու ծիրէն ներս հետեւեալ կառույցներն են որ տեղի ունեցան, կ’ունենան եւ տակաւին պիտի ունենան. Մայր Տաճար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Փասսադինա), Ս. Գէորգ (Փորթլենտ), Ս. Աբգար (Արիվոնա) եւ Ս. Կարապետ (Տեյլոր):

7.- Արեւմտեան Թեմը անմասն չէ նաեւ Միջ–Եկեղեցական աշխատանքներէն, որոնք Թեմիս վարկը կը բարձրացնեն:

8.- Առաջնորդարան եւ Պաշտօնէութիւնը: Այսպէղ կ'ուպենք մեր շնորհակալութիւնը յայտնել եւ յիշել, Առաջնորդարանի պաշտօնէութիւնը, որոնցմէ իւքանաչիւրը իրեն յանձնուած պարտականութիւնը ամենայն խղճմտութեամբ կը կատարեն ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւնը Արեւմտեան Թեմին, այլ խօսքով՝ Հայց. Առաքելական մեր Ա. Եկեղեցուն:

9.- Առաջնորդարանը ունի նաեւ իր Ենթայանձնախումբերը, որոնք իւրաքանչիւրը իրեն յատուկ ծրագրերով հանդէս կու գան: 2003-ին Յանձնախումբերու շարքին ստեղծուեցան եւս հետեւեալները.-

- .- ECF
- .- APN
- .- CYMA
- .- CEC
- .- Mer Huys
- .- Armenian Projects
- .- PCOF
- .- Friends of Etchmiadzin

10.- Զանապանք:

- .- Մշակութային ձեռնարկներու կազմակերպութիւն
- .- Պաշտօնականք
- .- Աղա Սարգիսեան Գրադարան
- .- Թանգարանային իրերու մէկտեղում
- .- Գրախանութ
- .- Գրասենեակ
- .- Համակարգչային սենեակ
- .- Գնահատականք
- .- Ձեռնադրութիւններ
- .- Կայք էջ

Որեւէ յաւակնութիւն չունինք, որ կատարուած աշխատանքը կատարեալ է, քանզի միայն Աստուծոյ գործն է կատարեալ: Այլեւ՝ ընդհակառակը քաջ կը գիտակցինք, որ մեր առջեւ են ծաւալած անաւարտ բազում ծրագրեր ու առաքելութիւններ, որոնք պարտ ենք իրականացնել: Թերեւս արդար պիտի ըլլար նոյնիսկ ըսել, որ անցնող վեց տարիները եղան հիմնականին մէջ փորձառական տարիներ, այս Թեմը իր բոլոր երեսներով լաւագոյնս հասկնալու եւ իրական աշխատանքը նոր պիտի սկսի աւելի նոր թափով, աւելի հեռանկարային ու խորքային իմաստով: Նկատի ունենալով Արեւմտեան ափին ապրող մեր ժողովուրդի թիւը եւ ծով կարիքները անհրաժեշտ է, որ մեր Թեմը իր Առաջնորդութեամբ ու ծուխերով կարողանանք բարձրացնել նոր մակարդակի մը վրայ: Որո՞նք են այն հիմնական քայլերը, որ մեր կեանքը պիտի կերպարանափոխեն, անհատապէս եւ հաւաքականութեան տեսակետէն դիտուած, որպէս եկեղեցի ու համայնք:

Առաջին քայլ: ԶԱստուած գտնելու ճանապարհին որոնումը: Այս է նախապայմանը, որ կը դրուի մեր բոլորին առջեւ: Եթէ Աստուած դարձնենք արմատը մեր կեանքին, ապա մեր կեանքի ընթացքը պիտի ըլլայ ուղիղ եւ արդիւնաւոր՝ Հայ Եկեղեցւոյ երազը իրականացնելու տեսակետէն: Այսպիսի խորհրդածութիւն է կատարած նաեւ Մարթին Լուտեր Քինկը, ուր յիշատակած է Ա. Օգոստինոս հայրապետի մէկ խօսքը. "So I say to you, seek God and discover Him and make Him a power in your life. Without Him, all of our efforts turn into ashes and our sunrises into darkest nights. Without Him, life is meaningless drama with the decisive scenes missing. But with Him

we are able to rise from the fatigue of despair to the buoyancy of hope. With Him we are able to rise from the midnight of desperation to the daybreak of joy. St. Augustine was right – we were made for God and we will be restless until we find rest in Him”.

Հեղեղաբար, քրիստոնէական դաստիարակութիւնը, հոգեւոր առաքելութիւնը պիտի օրէցօր դարձնենք մեր գլխաւոր նպատակը, որպէսզի մեր կեանքի ամբողջ ընթացքը ըլլայ դէպի Աստուած փանող ճանապարհը: Ինչքան հաստատ ենք այս ճանապարհին, այնքան աւելի մեր կեանքը իր ամբողջութեանը մէջ կը դառնայ արտայայտութիւնը Քրիստոսի Աւետարանէն ճառագայթող պարգամներուն: Աստուծոյ սէրը պիտի ներդնենք մանուկին սրտին մէջ, Աստուածգիտութեան լոյսը պիտի հաստատենք պատանիին հոգիին ու մտքին խորքը, եւ Աստուծոյ հետ մնալունօրէն ապրելու փափաքը պիտի փոխանցենք հաւատացեալին հոգեւոր ծառայութեան իւրովի կերպով մը:

Քրիստոնէական դաստիարակութեան առաքելութեան ամենակարեւորը բաժինն է Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ վարժարանները, որոնց առաքելութիւնը պայման պիտի դարձնենք բոլոր ծուխերէն ներս: Այս երկու վարժարանները հիմնական նշանակութիւն պիտի ունենան: Այսօրուան վիճակը միխթարական չէ եւ բաւական ըլլալէն շատ հեռու: Կատարուած աշխատանքը յատուկ Յանձնախումբի մը կողմէ կ'արդիւնաւորուի, երբ Ծուխերը ամբողջական համագործակցութիւն կ'արձանագրեն:

Առ այդ, քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքին պիտի տրուի յատուկ յանձնառութիւն մը, որպէսզի ըստ այնմ լծուի մարդուժի պարաստութեան աշխատանքի, որպէսզի ծուխերէն ներս կատարուելիք աշխատանքները ըլլան շատ աւելի մասնագիտական եւ ոչ թէ սիրողական: Պիտի կազմակերպուին համագումարներ, ուսումնառութեան շրջաններ՝ դպրաց դասերու, սարկաւագներու, ACYO երիտասարդութեան, Ծխական Խորհուրդի անդամներուն, Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ վարժարաններու ուսուցչական կազմին: Բայց այս բոլորը կ'իրականանան Ծուխերու համագործակցութեամբ:

Երկրորդ քայլ: Հոգեւորականաց պարաստութեան առաքելութիւն: Այս աշխատանքը արդէն իսկ սկսած է, բայց պէտք է ընդարձակենք ամենալայն առումով, որպէսզի ամէն համայնքի մէջ ապահովենք հոգեւորականներու ներկայութիւնը: Առիթը պիտի ընծայենք անոնց վերապարաստութեան ե՛ւ հոգեւոր ե՛ւ մտաւոր իմաստով, որպէսզի ծուխերու հոգեւոր առաքելութիւնը, ծիսական-վարչական կեանքը կարողանանք բարձրացնել նոր մակարդակի մը վրայ: Հոգեւորականը իր համայնքին գլխաւոր ճարտարապետն է եւ անոր հարկ է ընձեռել բոլոր միջոցները, որպէսզի իր առաւելագոյն պարաստութեամբ կարողանանք յաջողեցնել այն բոլոր սպասումները, որոնք ժողովուրդինն են: Մեր Եկեղեցին առհասարակ, ընդորում նաեւ Արեւմտեան Թեմը, հոգեւորականին տրուելիք համապատասխան միջոցները չէ ընծայած, որպէսզի ան մասնագիտացուած ձեւով պարաստութի եւ իր ծառայութիւնը շարունակէ անվրդով ու խաղաղ մտքով ու սրտով: Բնական է, այս եւ այսօրինակ հարցեր մէկօրէն միւսը իրենց ամբողջական լուծումը չեն գտներ, բայց ժամանակն է, որ Թեմական Խորհուրդը՝ առաջնորդութեամբ Պարգամաւորական Ժողովին այս հարցին ընծայէ մասնայատուկ ուշադրութիւն: Այստեղ կ'ուզենք նաեւ առ ի տեղեկութիւն ներկայացնել քահանայից պարաստութեան լսարանի ծրագրին, ուր պիտի փոխանցուին քահանայից թեկնածուներուն տարրական եւ սկզբնական գիտելիքներ մինչեւ Ս. Ներսէս արձանագրութիւնը:

Երրորդ քայլ: Ծուխեր եւ տրափու անդամակցութեան կարգաւորում: Արեւմտեան Թեմի կառոյցէն ներս ունինք ծխական համայնքներու թոյլ համակարգ մը կամ կառոյց մը: Ծուխերու ընդհանուր պարկերը աչքի առաջ ունենալով կը տեսնենք, որ անհամեմատելի տարբերութիւններ կան, որոնք ծուխերը իրարմէ կը բաժնեն: Թեմին հպօրութիւնը ճշգրտուած ուղղութեան մէջ կը կայանայ: Այդ իսկ պարճառով ալ հաստատեցինք տարեկան երեք դրոյթով հոգեւորականաց համագումարներ, որպէսզի հոգեւորականաց կարգաւորեալ ժողովներով կարողանայինք աստիճան առ աստիճան հիմքը դնել միօրինակ աշխատելաձեւի: Այստեղ հիմնական մտահոգութիւնը տրափու անդամակցութեան պարագան է, որուն համար

անհրաժեշտ միջոցներ պէտք է առնուին, որպէսզի կարելի ըլլայ բարձրացնել թիւը ներգործական ուժին Եկեղեցիէն ներս: Բայց ծուխի մը կեանքին մէջ հիմնականը սիրոյ կեանքն է: Ծուխը այն մեծ ընդամիսն է, որ ի Քրիստոս հաւատարեցալները պէտք է ապրին իրարու հետ փոխադարձ սիրով ու յարգանքով, ու մանաւանդ իրարմով մտաւոր կեանքով: Քրիստոսի սէրը պէտք է իշխէ բոլորիս վրայ: Եկեղեցին հոգեւոր հաստատութիւն մըն է եւ աշխարհայինը պէտք է ամբողջութեամբ դուրս հանենք մեր կեանքէն եւ առաջնորդուինք Աստուծոյ սիրովը, Քրիստոսի քարոզած սիրովը. *«Սիրեցէք իրար: Ինչպէս ես ձեզ սիրեցի՝ դուք ալ իրար սիրեցէք: Ձեր իրար սիրելով է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք»* (Յովհ 13.34–35): Մարթին Լուտեր Քինկ երբ կը խօսի սիրոյ մասին, հետեւեալ մտածումը կ'արձանագրէ. "Love is the most durable power in the world. This creative force, so beautifully exemplified in the life of our Christ, is the most potent instrument available in mankind's quest for peace and security".

Տակաւին, երբ կը խօսինք ծուխերու մասին, արդէն ժամանակն է, որ յարկապէս Մեծն Լոս Անճելըսի ծխական համայնքներու սահմանները յարկանան եւ անոր հետ մէկտեղ նաեւ ծուխի մը պարտականութիւնները որոշակիօրէն պարտաստուած ուղեգծով մը:

Չորրորդ քայլ: Առաջնորդարանի վարչամեթենայի վերակազմակերպում: Հիմք ունենալով Առաջնորդարանէն ներս անցնող վեց տարիներու մեր աշխարանքային փորձառութիւնը, պիտի ձեռնարկենք պաշտօններու հիմնական փոփոխութիւն, ինչպէս նաեւ նոր գրասենեակներու հաստատում: 4 Մայիս 2009 թուականէն սկսեալ տեղի պիտի ունենան պաշտօններու հիմնական փոփոխութիւններ, ներքին փոփոխութիւններով եւ վերակազմակերպումներու առաջադրանքով: Առաջնորդարանի վարչամեթենայի վերակազմակերպումի հետ մէկտեղ կարգ մը գրասենեակներ 2010 թուականի Յունուարէն սկսեալ պիտի տեղափոխուին Մայր Տաճարի ներքնամաս, ուր յարուկ կահաւորումով պիտի գործնականացնեն իրենց աշխարանքային ընթացքը: Որով Առաջնորդարանի ներկայ գրասենեակները եւ ներկայ բոլոր պաշտօնատարները հանդէս պիտի գան նոր պարասխանատուութիւններով եւ նոր տիրոջութիւններով:

Հինգերորդ քայլ: Մայր Տաճար եւ եկեղեցական նոր կառույցներ: Մայր Տաճարի կառուցումը եւ ծուխերէ ներս նոր կառույցներու որդեգրումը պիտի ունենայ առանցքային ուղղուածութիւն: Լիայոյս ենք, որ գալիք վեց տարիներու ընթացքին պիտի ունենանք նոր կալուածներու գնումներ եւ եկեղեցական շէնքերու ծրագրեր: Բնականօրէն, սակայն, Մայր Տաճարի շինարարութիւնը պիտի ունենայ կեդրոնական նշանակութիւնը, որուն աւարտը նախատեսած ենք 2010 Մարտ-Ապրիլ ամիսներուն, որուն օծումը պիտի կատարէ Ազգիս Վեհափառ Հայրապետը Սեպտեմբեր 2010 թուականին: Իսկ Յունիս ամսուայ ընթացքին պիտի հաստատենք Cathedral-ի Board of Director-ը:

Վեցերորդ քայլ: Mission Parishes Desk Նորահաստատ Ծուխերու Գրասենեակ կամ առաքելութիւն: Թեմական կառույցէն ներս յառաջիկայ տարիներուն լուրջ եւ հետեւողական աշխարանք պիտի տանինք նոր թափով ու եռանդով կազմակերպելու նոր ծուխերը, որոնք կը գործեն որպէս Mission Parishes, եւ որոնցմէ շարքերը ունին հնարաւորութիւնը մօտիկ ապագային դառնալու լուրժէք կերպով ծուխեր, իրենց հոգեւոր հովիւներով, թէկուզ եւ փոքր տարողութեամբ:

Նորակոչ ծուխերը լաւագոյնս կազմակերպելու համար պիտի հաստատենք Mission Parishes Desk-ը իր հոգեւոր պարասխանատուով: Տարակոյս չունինք, որ կարճ ժամանակուան ընթացքին այս բոլորը պիտի գործեն աւելի կարգաւորեալ ձեւով, որպէսզի մեր ժողովուրդի վաւակները անհաղորդ չմնան մեր հայրերու հաւատքի կեանքէն:

Եօթներորդ քայլ: Առաջնորդարանի կառույցներու եւ Յանձնախումբերու վերակազմակերպում: Ներկայիս Առաջնորդարանը կը գործէ մի քանի կառույցներով եւ աւելի քան երե-

սուն մնայուն յանձնախումբերով: Որոշապէս անհրաժեշտութիւնը կը պահանջուի նոր կառուցներու եւ յանձնախումբերու, նկատի առնելով աշխարանքին փարողութիւնը: Յունիս 2009 թուականին, ինչպէս Առաջնորդարանի պաշտօնէութեան պարագային, այդպէս ալ վերակազմակերպութեան պիտի ենթարկենք յանձնախումբերը, իւրաքանչիւրին վրայ նշանակելով հոգեւորական մը:

Որոշ է, որ Առաջնորդարանը իր աշխարանքները պէտք է ծաւալէ առաւել ընթացք տալով audio-visual եւ electronic հաղորդակցութեան միջոցներու ձեռքբերումներով: Մեր առջեւ կը դրուին լուրջ խնդիրներ առաւելագոյնս պարզացնելու համար լրատուական միջոցները, Առաջնորդարան-Ծուխեր հաղորդակցութեան համակարգը, Առաջնորդարան-Համալսարաններ, Առաջնորդարան-Հանրային Վարժարաններ եւ Առաջնորդարան-Ընկերային ծառայութիւններու առաքելութիւնները:

Ութերորդ քայլ: Ամրապնդել Առաջնորդարանի փոփոխական հիմքերը: Մեզի համար գլխաւոր մտահոգութիւն է Առաջնորդարանի փոփոխական եւ պիւշտային պարագան: Անցնող տարիներուն Առաջնորդարանի վարչամեքենան քանի մը անգամներով ընդարձակուած է, ընդլայնուած են նաեւ աշխարանքները եւ շատ բնականօրէն բազմապատկուած են ծախսերն ու նիւթական պարտաւորութիւնները: Լրջօրէն կը ծրագրենք դիմելու միջոցներու, որոնք պիտի ըլլան եկամտաբեր, ապահովելու համար Առաջնորդարանի աշխարանքներու հեշտաւոր ընթացքը:

Իններորդ քայլ: Առաջնորդարանի Հիմնադրամի առաւել վարգացում: Անցնող հինգ տարիներուն Առաջնորդարանի Հիմնադրամը ինքնուրուիքեան ունեցաւ վարգացում: Մայր Տաճարի աշխարանքներուն բերումով, կարելի չէղաւ այս ծրագրին վրայ համապատասխան ուշադրութիւն բեւեռել: Լիայոյս ենք, որ 2010 թուականէն սկսեալ պիտի կարողանանք յատուկ ուշադրութիւն բեւեռել նաեւ Հիմնադրամի առաքելութեան վրայ:

Տասներորդ քայլ: Կարգաւորում Թեմի ծիսական-արարողական գիրքերու: Անցնող տարիներուն քանիցս փորձեցինք կեդրոնանալ այս աշխարանքին վրայ, բայց աշխարանքներու վանապանութեան բերումով կարելի չէղաւ ընթացք տալ եւ իրականացնել ծիսա-արարողական գիրքերու հրատարակումը: Մեր ծրագրին է, որ 2009-2010 թուականներուն վերջնականացնենք այս աշխարանքը, որպէսզի Թեմը ունենայ իր հրատարակութիւնները եւ միանգամընդմիջ տարգաւորուի նաեւ այս աշխարանքը, ապահովելու համար արարողակարգերու միօրինակութիւնն ու կարգապահութիւնը:

*

* *

Մեր տեսիլքն է ունենալ յարաճուն Թեմ մը ոչ միայն քանակական առումով, այլեւ՝ հաւատարմի կեանքի տեսանկիւնէն դիտուած: Մեր աղօթքն է առ Աստուած, որ բոլորին պարգեւէ քաջառողջ կեանք եւ հաւատարմի փոկունութիւն, որպէսզի շարունակենք դառնալ սպասաւորներ Աստուծոյ Տան մէջ, կատարելու համար Աստուծոյ գործը, ուրիշ խօսքով՝ կառուցելու համար հոգեւոր տունը, աղօթքի տունը, ուր կը մշակուի մարդուն հոգեւոր կեանքը Աստուածսիրութեամբ, մարդասիրութեամբ, ստեղծագործական կեանքով ապրելու գիտակցութեամբ, մէկ խօսքով՝ այն տեղը ուր մարդուն կեանքը կը դառնայ ապրող Աւերարան:

Առ այդ, ելրակացնելու համար մեր խօսքը, կ'ուզենք անգամ մը եւս յիշել Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ Սրբապան առաքելութիւնը, որ իւրաքանչիւրիս ուսերուն վրայ դրուած Քրիստոսի քաղցր լուծն է.-

ա.- Քարոզել Աստուծոյ Խօսքը, Քրիստոսի Աւերարանը:

բ.- Դաստիարակել ժողովուրդը մեր հայրերու սրբազան աւանդութիւններով, միշտ բարձր պահելու համար ընտանեկան սրբութիւնը, բարոյական կեանքի ընթացքը:

գ.- Ներշնչել ժողովուրդը ազգային ոգով, հայրենիքի սիրովն ու Ա. Էջմիածնի հանդէպ հաւատարմութեամբ:

դ.- Ուղղել երիտասարդութիւնն ու պատանիները համամարդկային սիրոյ գաղափարականներով:

ե.- Եկեղեցին դարձնել ծառայութեան ներշնչումը բաշխող հիմնական աղբիւրի:

Ի վերջոյ, սիրելի պարգամաւորներ, կ'ուզենք մեր երախտագիտութիւնը յայտնել ձեզի անխտիր ձեր վստահութեան համար: Առաջնորդարանը օրհնուած է, երբ մենք բոլորս Աստուծոյ կամքը կեանքի կը կոչենք եւ հաւատքի քաջութեամբ ի Քրիստոս միացած կը պայծառացնենք Հայց. Ա. Եկեղեցին:

Մեր որդիական սէրը կը յղենք Ազգիս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, իր հայրական հոգածութեանը համար:

Մեր եղբայրական սէրը Թեմի նախկին Առաջնորդ՝ Գերշն. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին, որ սիրով կ'ընդառաջէ զանազան առիթներով զորավիգ ըլլալու Թեմի աշխատանք:

Մասնայարուկ մեր սէրը Թեմի ողջ հոգեւորականց, որոնց վստահութիւնն ու աջակցութիւնը կ'ամրապնդէ մեզ մեր առաքելութեան մէջ:

Մասնայարուկ մեր երախտագիտութիւնը 2003-2009 տարեշրջաններուն Թեմական Խորհուրդներուն: Այստեղ ընդգծուած ձեւով մեր սէրն ու երախտագիտութիւնը նախկին Արեւնապետներուն՝ Տոքթ. Վարուժան Ալթրպարմաքեանին, Տիար Ռիչըրտ Մուշիկեանին, Բրշ. Պարլո Սրկ. Տէր Սկրպչեանին: Երախտագէտ մեր զգացումները ներկայի Արեւնապետ՝ Տիար Յովսէփ Կանիմեանին, որ 2003 թուականէն սկսեալ միշտ մնաց մեր կողքին եւ իր ծառայութիւններով առաւել ամրապնդեց մեզ մեր ուխտին եւ հոգեւոր ծառայութեանը մէջ:

Թող Աստուած մշտապէս օրհնէ ձեզ եւ զօրեպնդէ ձեր հոգեւոր կեանքը Սուրբ Հոգւոյ շնորհքներով: Աստուածաբուր կեանքը մեծագոյն եւ ամենաընտիր ընծան է, զորս պէտք է իմաստաւորենք բարի գործերով եւ սրտեղծարար կեանքով: Համարեղ աշխատանքով պիտի ծաղկեցնենք այս Թեմը Մայր Տաճարի կառուցումով, նոր եկեղեցականներու պարաստութեամբ, նոր եկեղեցիներու կառուցումով եւ բազում առաքելութիւններու իրականացումներով, որոնց մէջ ամենակարեւորագոյն տեղերէն մէկը պիտի մնայ երիտասարդութիւնը, պատանիներն ու մանուկները:

Տէր անսասան պահէ մեր տունը՝ Արեւմտեան Թեմը իր հոգեւորականներով եւ աշխարհիկ սպասաւորներով, որպէսզի Ա. Էջմիածնի լոյս հաւատքով լեցուն մեր սրտերը նոր արիւն ներառկեն գալիք սերունդներու հոլութեան մէջ:

Սրբազան Հօր աղօթքով փակուեցաւ Երկրորդ Նիստը: